բողոքին, դրա հիման վրա կայացված որոշմանը և այն դատական կարգով բողոքարկված լինելուն, ապա Դատարանի գնահատմամբ այն որևէ նշանակություն ունենալ չի կարող քննվող վեճի լուծման տեսանկյունից, քանի որ չի վերաբերում հայցի առարկային և դուրս է հայցապահանջի շրջանակներից, քանի որ վերաբերում է այլ հրավերի պահանջների բողոքարկմանը, ուստի նշվածին Դատարանը չի անդրադառնում:

Ինչ վերաբերում է հայցվոր ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի 28.04.2025թ. արձանագրությունը և արձանագրության թիվ 1 հավելվածին, ապա Դատարանը ցանկանում է նշել, որ դրանցով չի կարող ապացուցվել սույն քաղաքացիական գործի համար նշանակություն ունեցողը որևէ փաստ, քանի որ սույն դեպքում քննվում են Հրավերի պայմանները, այլ ոչ թե հայցվոր ընկերության համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը Հրավերի պայմաններին, հետևաբար նշվածին ևս Դատարանը չի անդրադառնում:

Վերոգրյալի հիման վրա՝ Դատարանը գտնում է, որ հայցը՝ Հրավերը մասնակի անվավեր ճանաչելու մասով ենթակա է մերժման՝ ինչից հետևում է, որ մերժման են ենթակա նաև տվյալ պահանջից ածանցվող մյուս պահանջները, քանի որ դրանց բավարարման հարցը կարող էր քննարկման առարկա դառնալ բացառապես այն դեպքում, երբ բավարարվեր հիմնական հայցապահանջը:

Միաժամանակ, Դատարանն անդրադառնալով գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման հարցին, գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման, իսկ հայցվոր ընկերության կողմից վճարվել է անհրաժեշտ չափով պետական տուրքի գումարը, Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

Վ Ճ Ռ Ե Ց

Հայց մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ վճռի հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IEB7-8FB6-4E92-A18D հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am